

ՓՈԽԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆԻ
ՊՈԵԶԻԱՅՈՒՄ

Անառարկելի իրողություն է, որ մեր օրերի տաղանդավոր բանաստեղծ Համո Սահյանի բանաստեղծությունները ակնառու են ոչ միայն թեմաների բազմազանությամբ ու գեղարվեստական բարձր արժանիքներով, այլև լեզվական բարձր մակարդակով, ոճի ինքնատիպությամբ ու բազմազանությամբ: Բանաստեղծի պոեզիայում գործածված փոխաբերությունները ներկայացնենք դասակարգման տարբեր տեսակներով:

1. ԸՍՏ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ. փոխաբերություններն, ըստ գործառության աստիճանի, լինում են՝ ա) համագործածական, բ) անհատական:

ա) Յուրաքանչյուր հեղինակի ստեղծագործության լեզվի և ոճի ուսումնասիրությունը սովորաբար սկսվում է նրա բառապաշարից: Ա.Ռեֆորմատսկին նշում է. «Լեզուն՝ որպես հաղորդակցման միջոց, ամենից առաջ «բառերի լեզու է»¹: Ինչպես բոլոր գրողների, այնպես էլ Հ.Սահյանի բառապաշարի միջուկը կազմում են համագործածական բառերը: Անգամ համագործածական բառերը կիրառելիս «յուրաքանչյուր հեղինակ դնում է իր ինքնուրույնությունը և անհատականացնում ազգային լեզվի բառերն ու կապակցությունները նոր զուգահեռություններով: Հենց այդ անհատականությունն էլ տվյալ հեղինակի ոճն է դառնում», - նշում է Վ.Առաքելյանը²: Լինելով տաղանդավոր անհատականություն՝ Հ.Սահյանը յուրովի է գործածում որոշ համագործածական բառեր.

Հայաստան, անունդ տալիս

Արևոտ մի սար եմ հիշում՝

ժայռի մեջ մի տուն եմ հիշում,

Ճակատին՝ ձյունի պատառիկ,

Ալևոր կամուրջի *հոնքին՝*

Սարն ի վար *բարակ* մի առու՝

Ծիծառի մի բույն եմ հիշում,

Շուրթերին հայրեն ու տաղիկ (ԶՊ, 164):

Մասերնու *վարսաթափ* մի թուփ,

Ահա առաջին հայացքից սովորական թվացող բառերը ստեղծագործությունում դարձել են յուրօրինակ փոխաբերություններ՝ գեղեցիկ բնութագրումներով անձնավորելով Հայաստանն ամբողջությամբ:

¹ А. Реформатский, Введение в языкознание, Москва, 1965, стр. 54.

² Վ.Առաքելյան, Ավետիք Իսահակյանի պոեզիայի բառապաշարի ոճաբանական առանձնահատկությունները, Եր., 1954, էջ 47:

բ) Գեղարվեստական խոսքին առանձնապես վառ արտահայտչականություն են տալիս անհատական, հեղինակային փոխաբերությունները, որոնք ավելի շատ գործածվում են չափածո խոսքում: Անհատական, հեղինակային փոխաբերությունները գործածվում են միայն տվյալ հեղինակի կողմից, հեղինակի ստեղծագործական երևակայության արդյունքն են և սովորաբար հասկանալի են միայն տվյալ ստեղծագործության մեջ.

Մեր լեզուն *մեր խիղճն է դա,*
Սուրբ հացը մեր սեղանի,
Մեր հոգու կանչն է արդար
Ու համը մեր բերանի:

Մեր լեզուն *ծուխն է մեր տան,*
Մեր կշիռն աշխարհի մեջ,
...Մեր լեզուն արյունն է մեր,
...Մեր բուրմունքն ու գույնն է մեր...

(Դ. 2, 215):

Լեզուն բնորոշող այսպիսի փոխաբերություններ միայն փոխաբերությունների վարպետ բանաստեղծը կարող էր կատարել:

Երբեմն նույն անձը, առարկան կարող են բնութագրվել տարբեր անհատական փոխաբերություններով: Այդ դեպքում սովորաբար ամբողջական բնութագրման համար, բնականաբար, անհրաժեշտ է նկատի ունենալ բոլոր փոխաբերությունները միասին: Համեմայն դեպս, փոխաբերություններն առանձին-առանձին կարող են պատկերացում չտալ պատկերվող անձի, առարկայի մասին, երբեմն նույնիսկ անհամոզիչ հնչել: Որպես դրա լավագույն օրինակ կարելի է հիշել Հ.Սահյանի «Պարույր Սևակին» բանաստեղծության փոխաբերությունների մեծ մասը: Կատարենք փոքրիկ մեջբերում.

Դու *հաց էիր* ինձ համար,
Օդ էիր ու ջուր:
 Իմ հանճար, *իմ հիմար,*
Իմ պղտոր, իմ քինջ,

Մարզի համեմ, լանջի խոտ
Բարձունքի ծաղիկ,
Բախի զնգոց, խոփի վար,
 Ամեն, ամեն ինչ ... (Դ. 2, 151):

2. ԸՍՏ ԾԱԳՄԱՆ. «Փոխաբերությունները, ըստ ծագումնային դասակարգման, լինում են՝ ա) գրական, բ) ժողովրդական»³:

ա) **Գրական** ծագում ունեցող փոխաբերությունները հեղինակային փոխաբերությունների նման գործածության սահմանափակ ոլորտ ունեն, հիմնականում գործածվում են գրական երկերում, բայց կարող են դուրս գալ այդ սահմաններից, տարածվել ժողովրդի մեջ: Հ.Սահյանի չափածոյի բառապաշարի միջուկը գրական լեզվի բառաշերտն է, որը, անցնելով բանաստեղծի ստեղծագործական գունեղ ճանապարհով, ձեռք է բերել ազգային երանգներ: Բանաստեղծը հենց ազգային լեզվամտածողությամբ էլ համակարգված կեր-

³ Օ.Բաբայան, Փոխաբերությունը արդի հայերենում, Եր., 1998, էջ 20:

պով կերտում է ողջ խոսքի հյուսվածքը: Ահա թե համագործածական բառերով հնչպես է արտահայտում բանաստեղծն իր ջերմ վերաբերմունքը Հայաստանի նկատմամբ «Հայաստան ասելիս» բանաստեղծության մեջ, որտեղ դրանք գեղեցիկ փոխաբերություններ են դառնում.

Հայաստան ասելիս *այտերս այրվում են,*
Հայաստան ասելիս *ծնկներս ծալվում են,*
...Հայաստան ասելիս *շրթուներս ճաքում է,*
Հայաստան ասելիս *հասակս ծաղկում է...* (ԲՊ, 567):

Պարզապես բանաստեղծության քնարական հերոսը իր հոգու մեջ է կրում Հայաստանը և այդ չափամիջով է նայում աշխարհին ու մարդկանց:

բ) Սակայն ժողովրդական և անհատական, հեղինակային փոխաբերություններն իրարից բոլորովին կտրված չեն: Ընդհանրապես լեզվի մեջ կան հեշտ փոխաբերացվող բառեր, որոնք դարեր շարունակ գործածվում են փոխաբերական երանգներով և կազմում են ժողովրդական փոխաբերություններ:

Ահա թե հեղինակն ինչպիսի ինքնատիպ ձևով է ներկայացնում Հայաստանը հետևյալ բանաստեղծության մեջ, որը հարուստ է ժողովրդական ծագում ունեցող փոխաբերություններով, որոնցից յուրաքանչյուրն իր դերն է կատարել՝ դառնալով Հայաստանի նկարագիրն արտահայտող ճշմարիտ գտնված խորհրդանիշ.

...Երգիս մեջ *քարափ* ու *մամուռ* ես,
խաղողի ողկույզ ես և *նուռ* ես,
...Սասնա ծուռ քաջերիդ համար
Սեփական *տանիք* ես ու *դուռ* ես (Հ. 1, 56):

Այստեղ տեղին է հիշել Լ. Հախվերդյանի նկատառումը ժողովրդական փոխաբերությունների մասին. «Փոխաբերությունը մենք չենք ստեղծում, այլ գործ ենք անում վաղուց ի վեր գտնված, բյուրեղացած ձևերը: Իսկ ժամանակին դրանք ստեղծել են շնորհալի մարդիկ»⁴: Համո Սահյանի խոսքարվեստն էությանմբ ժողովրդական է: Նա կարողանում է հմտորեն ու դիպուկ կերպով կիրառել խոսակցական լեզվից քաղված, ժողովրդական շեշտ ունեցող բառեր, որոնք մեծ հուզականություն ու անկեղծություն են հաղորդում խոսքին: «Մայրամուտ» բանաստեղծությունը այս ամենի հաստատումն է.

Սարն առել վրան մի *քող*,
Ննջում է կարծես *ծաղկե* անկողնում,
...ժայռի ստվերը գետափին *չոքել*,
Վիզը երկարել ու ջուր է խմում ... (ԲՊ, 45):

⁴ Լ. Հախվերդյան, Զրույցներ լեզվի մասին, Եր., 1986, էջ 96:

Թվում է, թե բանաստեղծության մեջ գործածված ամեն մի փոխաբերություն վրձնի մի նուրբ հպում է, որը յուրաքանչյուր անգամ փոխում է պատկերի երանգն այնպես, որ մայրամուտի պահը հավերժանա ու «Մայրամուտ» կոչվող մի գեղեցիկ կտավ դառնա:

3. ՇՍՏ ԲԱՌԻ ՍՏԱՅԱԾ ՓՈԽԱԲԵՐԱԿԱՆ ԻՄԱՍՏԻ

Եղ.Աղայանը նշում է, որ «բառի ստացած փոխաբերական իմաստը լինում է՝ ա) բառային կամ մակերեսային, բ) խորքային կամ կապակցական»⁵:

ա) Բառային կամ մակերեսային փոխաբերությունները հենվում են առարկաների որևէ նմանության վրա, և փոխաբերվող բառը գործնականորեն կարող է փոխարինվել մի այլ բառով, որի ուղղակի իմաստը արտահայտվում է տվյալ փոխաբերությամբ.

Պոզնած տարիքս ուտերիս առնեն,

Պոզնած ոտքերս քարշ տալով գնամ... (Բ հ.283):

Պոզնած տարիքս կապակցության մեջ փոխաբերվող բառը *հոգնած* բառն է, որի ուղղակի իմաստը հենց նույն օրինակում կա (հոգնած ոտքերս) և, երբ այդ բառը փոխաբերաբար վերագրվում է *տարիքին*, ապա այդ փոխաբերության հիմքն է դառնում. տվյալ դեպքում նույնացվում են ոտքերի շատ շարժվելը և տարիների առաջ գնալը:

բ) խորքային կամ կապակցական փոխաբերությունները պայմանավորված են տվյալ կապակցությամբ: Այս դեպքում փոխաբերվող բառի փոխաբերական իմաստը կախման մեջ է կապակցվող բառից կամ ամբողջ նախադասությունից և չի կարող բխեցվել փոխաբերվող բառից՝ առանձին վերցրած: «խորքային կամ կապակցական փոխաբերությունները, - նշում է Եղ. Աղայանը, - մեծ մասամբ վերածվում են ծավալուն, բազմանդամ ու բազմակի փոխաբերությունների ամբողջության, որով ստեղծվում է բանաստեղծական խորիմաստ, բովանդակալից ու գեղեցիկ պատկեր»⁶: Ինչպես՝

Սարը սարերից ամպ է գողանում,

Ու երբ *հագնում է շրջագզեստն* ամպի,

Ծնկները ծածկել չի կարողանում:

Եվ *ամաչում է* սարը սարերից,

Ով հասակն ի վար *քրտինք է թափում*

Իր *շրջագզեստի* խոնավ ծալքերից (ԲՊ, 467):

Վերոհիշյալ օրինակում միմյանցով պայմանավորված՝ փոխաբերաբար են գործածվել բոլոր ընդգծված բառերն ու բառակապակցությունները: Ամեն

⁵ Եղ.Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1984, էջ 55:

⁶ Եղ. Աղայան, Լեզվաբանության հիմունքներ. Եր., 1987, էջ 347:

ինչ սկսվում է նրանից, որ սարը ամպի շրջագծեստն է հագնում, ու սկսում է խորանալ իմաստը՝ հանդես բերելով այլ փոխաբերական գործառնություններ, որոնք, զարգացնելով գործողությունները, վերջիվերջո, վերածվում են ամծրկի։ Եվ այս բոլորը միասին պատկերը դարձնում են ավելի շոշափելի, ավելի մոտ։ Այդպես է նաև հետևյալ օրինակում, որտեղ միմյանցով պայմանավորված փոխաբերաբար են գործածվել *ծամերը, զմրուխտե, հյուսել, շորորալ, ժպտալ* բառերը

Ուռենին հյուսել է զմրուխտե ծամերը,

Շորորում, ժպտում է բոլորին (ՅԵՄ, 69)։

4. ՇԱՏ ԿԱԶԱՌԻԹՅԱՆ. «Փոխաբերությունները կարող են լինել՝ ա) կարծ (մեկ կամ երկու բառով արտահայտված), բ) ծավալուն»։

ա) Կարծ փոխաբերությունները արտաքին ձևով հիշեցնում են մակդիրների, քայց նրանցից տարբերվում են ուժեղ շեշտված փոխաբերական իմաստով.

*Ինքնությունս հունցեցին
Օրերդ անհանգիստ
Քարանձավների լալկան
Եվ քարերդ խիստ*

*Եվ ցուտերդ քարքարոս
Չորովելներդ օրհնած,
Վարդավառների թրջված,
Եվ բողբոջների զարթնած ...*

(ՔՊ, 556)։

Ընդգծված բոլոր փոխաբերությունները փոխաբերական մակդիրներ են, որոնցով քննադրվում են այն ամենը, որոնք, ընդհանրապես, «մասնակցում են» մարդու ինքնության կազմավորմանը։

բ) Ծավալուն փոխաբերությունները կարող են հանդես գալ և իբրև առանձին տողեր ու պարբերություններ, և իբրև մեկ ամբողջական ստեղծագործություն։

Սիա ինչից կարող է «հոգնել մարդը»։ մեկը մյուսին հաջորդող փոխաբերված տողեր՝ *հոգնել* բառի հարակրկնությամբ. մարդը կարող է «հոգնել նաև հոգնելուց»։

Չոգնել եմ արդեն հանդարտ հոսելուց,

Կշտամբանքներով ոմբակոծվելուց,

Իմ մտքերի հետ մթնում խոսելուց,

Սին կյանքս խոսքով ոսկեզօծելուց,

Չոգնել եմ քարուն ալեկոծվելուց,

Չոգնել եմ ամեն հովից թեզվելուց,

Կշտամբանքներով ոմբակոծվելուց,

Չոգնել եմ նաև այսբան հոգնելուց (ՔՊ 189)։

Չամո Սահյանը նաև ամբողջական փոխաբերական ստեղծագործություններ կերտող վարպետ է։ Եվ երբ հիշողությունների գիրկն են ընկնում.

*Քիչ է մնում, թե մանկանամ,
Ելնեն նորից Գյազբել գնամ,
... Քունս տանի, մի քիչ ննջեմ,
Երագիս մեջ երկինքն հնձեմ ...*

*Ծիպոտ անձն լեռան քանին,
Քշեմ, էլ բան չհարցնեմ,
Չարդից ջոկեմ աստղ ու լուսին
Ու տուն բերեմ լուսը-լուսին*

(ՔՊ, 364)։

5. ԸՍՏ ԲԱՌԱՊԱՇՏԱՐԻ ԶԵՎԱԻՄԱՍՏԱՅԻՆ ԽՍԲԵՐԻ

Համո Սահյանը խոսքի միօրինակությունից խուսափելու, ինչպես նաև մեր պատկերացումները տարբեր առարկաների, երևույթների նկատմամբ ազնվի վառ ու բազմակողմանիորեն բնութագրելու նպատակով հաջողությամբ շարունակել է նաև բառապաշարի ձևաիմաստային խմբերից՝ վարպետորեն կերտելով փոխաբերաբար գործածված հոմանիշներ, հականիշներ, նաև պատկերը ապելի դիտարժան ու շոշափելի դարձնող հարանուններ:

«Հոմանիշային շարքի անդամներն ընդհանրապես նույն առարկայի, երևույթի, հատկանիշի և այլնի իմաստն ունեն, բայց յուրաքանչյուրը ցույց է տալիս դրա մի տարբեր աստիճանը, ուժգնությունը և այլն ... և շատ հաճախ իրարից տարբերվում են իրենց արտահայտած վերաբերմունքով, գնահատությանը», - գրում է էդ. Աղայանը⁸: Սիս ամպը *դողում, սարսռում է*, վաղն էլ դառնալու է *կայծակ*, այնուհետև աստիճանները ուժգնանում են. դառնալու է *կարկուտ*, դա էլ քիչ է, *աղետ*. արդյունքում ստացվում են *դողում-սարսռում, կայծակ-կարկուտ-աղետ* հոմանիշները.

Ամպը հառաչում էր լեռան լանջին,

Դողում, սարսռում էր հասակով մեկ:

... Գնում էր, որ վաղը երկինքն ի վար

Դառնար *կայծակ, կարկուտ*, դառնար *աղետ* (ԱՅԱ, 43):

Հետաքրքիր հակադրություններով է հեղինակը ներկայացնում աշխարհը, որտեղ ապրում ենք. այն *լույս ու մթին, հանդարտ ու խոր, շիտակ ու ծուռ, մեղմ ու դաժան, խենթ ու խելոք, շոշափելի ու անիրական, չվերծանված ու հասկանալի* է (ՔՊ, 573):

«Մարդ» բանաստեղծության մեջ էլ Սահյանը շատ ճշգրիտ հակադրություններ է կերտում, այս անգամ մարդուն բնորոշող ամբողջ մի շարան.

Դու *հողածին*, դու և *Աստված*,

Դու և *հաղթող*, դու և *պարտված*,

Դու *անտակ վիհի*, դու և *բարձունք*,

Դու և *ժպիտ*, դու և *արցունք*:

Դու և *ամպրոպ*, և *ծիածան*,

Դու *Ծիր Կաթին*, դու և *վայրի*

Մացառներում կորած կածան:

Դու *տմակյաց* ու *թափառիկ*,

Դու և *կրակ*, դու և *ժաղիկ*,

Խեղճ ու *կրակ* և *անառիկ*,

Դու *բնության անքննելի*

Եվ *բնության մի պատառիկ*,

Դու *հնություն հնամենի*

Ու դեռ *գալիք* ... (ՔՊ, 282):

Հարանուններով կերտված գեղեցիկ նմուշներ են հետևյալ օրինակները՝ «Խավարն է *խրտնում* ... աստղերն են *քրտնում* (ՔՊ, 358), «Ծովը *թրքում է* ...

⁸ *էդ. Աղայան*, նշվ. աշխ. էջ 352-353:

Ծովը *թռչում է* (ԲՊ, 386), «Երբ *քարափներն* աչքիդ *կարապներ* են դառնում» (ԲՊ, 274):

6. ՇՍՏ ԼԵԶԳԻ ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՇԱՐԱԴՅՈՒՄԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻ

Հաշվի առնելով լեզվի երկու մակարդակների փոխկապակցվածությունը՝ նպատակահարմար ենք գտնում քննությունը կատարել զուգահեռ:

Նախադասության մեջ փոխաբերությունը հանդես է գալիս ինչպես շարահյուսական տարբեր պաշտոններով, այնպես էլ տարբեր խոսքի մասերով:

Պակաս կարևոր չեն նաև փոխաբերացված հարադրությունները: Եվ քանի որ հարադրությունների կազմի մեջ կրկին քննվում են տարբեր խոսքի մասեր, ըստ այդմ հարադրություններով կազմված փոխաբերություններին ևս տեղ ենք հատկացրել այս բաժնում:

Համո Սահյանի ստեղծագործություններում համեմատաբար ավելի շատ կիրառված են պարզ նախադասությունները, բայ-ստորոգյալները, ածականներով, հարակատար դերբայներով արտահայտված որոշիչները, գոյականները:

Իսկ ինչ վերաբերում է հարադրություններին, Համո Սահյանի պոեզիայում հանդիպում ենք և անվանական, և բայական հարադրությունների հետաքրքիր գործածությունների:

Փոխաբերությունների ստեղծման գործում ամենամեծ դերը պատկանում է բային: «Բայն աչքի է ընկնում ոչ միայն իր իմաստաբանական ու քերականական կարգերի ու բառածների հարստությամբ, - նշում է Պ. Պողոսյանը, - այլև նախադասության մեջ ունեցած բացառիկ դերով, որով և պայմանավորված է նրա կարևոր դերը նաև խոսքի ոճաբանական համակարգում»⁹:

Ներկայացնենք մի քանի օրինակներ, որտեղ բանաստեղծը փոխաբերական իմաստներով կառուցում է պարզ նախադասություններ, ուր հաջողությամբ կիրառում է փոխաբերաբար գործածված գոյականով արտահայտված ենթակայներ և բայ-ստորոգյալներ՝ *«Ննչում է* Գյազբելը երկնքում, *Փեշերը* գետի մեջ *թրջվում են* (Բ հ. 253), *«Ծալվել է* սարը սարի վրա, *Չորը* ձորի մեջ *մոլորվել է*, *Չորեկ է* ամպը ժայռի վրա, *Աչքերը* վրաս *խողորել է* (ԲՊ, 263), *«Ծովը փլվում է*, *փախչում է*, *լաց է լինում...* Եվ *ծիծաղում է* իր խելքի վրա (ԲՊ, 386): *«Քամին քնել է*, *Քարը արթուն է*, *Քարը ժպտում է*, *Ջուրը երգում է*, *Ջուրը ժպտում է* (ԲՊ, 444):

Մեկ հայրենում էլ հեղինակը *անշշուկ*, *անարծազանք* ածականներով արտահայտված որոշիչների կողքին գործածում է *համրացած*, *խլացած*

⁹ Պ. Պողոսյան, Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, գ. 1, Եր., 1990, էջ 251:

հարակատար դերբայներով արտահայտված որոշիչներ՝ «ի՞նչ ասեմ, ծեղ ի՞նչ ասեմ, *Անշշուկ, անարծազանք, Համրացած, խլացած* սերեր...» (60 և մ. հ., 14):

Սահյանը գործածում է թե նախադաս, թե հետադաս որոշիչներ, որոնք զեղարվեստական խոսքում մեծ դեր ունեն։ Բանաստեղծի պոեզիայում առկա են և մենանդամ և բազմանդամ հետադաս որոշիչներ։ «Մենանդամ որոշիչները, գործածվելով որոշյալներից հետո, մի տեսակ բանաստեղծական վեհ ու վսեմ շունչ են հաղորդում խոսքին», - նշում է Վ. Ավագյանը¹⁰։ Այսպես, օրինակ, Հ. Սահյանը մի բանաստեղծության մեջ ծովը բնորոշելու համար գործածում է *ծարավ, պառավ* մենանդամ որոշիչները՝ հետադաս շարադասությամբ.

...Քեզ կուլ կտա, ալիք, ծովը *ծարավ* ... ծովը *պառավ* ... (ԶՊ, 382):

Ահա ամպերն են *թափառական ու երազուն*. այստեղ փոխաբերական իմաստով արտահայտված բազմանդամ որոշիչները, հատկապես հետադաս գործածությամբ, ավելի են ընդգծում որոշիչի՝ հատկանիշ արտահայտող որոշչային իմաստը:

Ու՛ր են գնում այս ամպերը՝ *Թափառական ու երազուն*... (ՀԵՄ, 335):

Հարադրություններով արտահայտված փոխաբերություններ: Ժողովրդական լեզվամտածողությանը բնորոշ է նաև հարադրությունների լայն կիրառությունը: Համո Սահյանի պոեզիայում հանդիպում ենք և անվանական, և բայական հարադրություններով արտահայտված փոխաբերությունների:

Ահա հեղինակի խորհուրդն ընթերցողին՝ անգամ *խառն ու խոռով* դարում պիտանի լինել (ԶՊ, 589), ցավում է հեղինակը փուչ անցած օրերի համար, խոսքի *համ ու հոտից* դատարկված ծորերի համար (60 և մ. հ., 30), հպարտանում է բանաստեղծը *բերք ու բարիք* բաշխելու համար (ԶՊ, 437), իսկ քարափների երեսների *շողք ու շիկնանքով* էլ կարելի է հիանալ.

Քարափները, կժերն ուսին,
Իջնում էին գետը ջրի,
Երեսներին *շողք ու շիկնանք*,
Թիկունքներին ծան ունեին (ԶՊ, 502):

«Հարադիր բայերը գործողությունն արտահայտում են ավելի վառ, քան դրանց հոմանիշները, - նկատել է Լ. Հախվերդյանը, - Ո՞րը գործածել: Դրանցից ամեն մեկն իր ոճական գույնն ու արժեքն ունի, ուրեմն և՛ գործածության իր տեղը: Լեզվական ճաշակն ու հոտառությունն են հուշում, թե խոսքի տարբեր ոճերի մեջ հոմանիշներից որը պետք է ընտրվի»¹¹:

¹⁰ Վ. Ավագյան, Հայոց լեզուն 8-9-րդ դասարաններում, Եր., 1990, էջ 65:

¹¹ Լ. Հախվերդյան, Նշվ. աշխ., էջ 171:

Պիոի նկատի ունենալ, որ հարադրավոր քայլերն իմաստային ավելի հարուստ նրբերանգներ ունեն. քան նրանց զուգահեռ ձևերի համադրական կազմությունները՝ Փորձենք հետևյալ հատվածներում ընդգծված հարադրավոր քայլերը փոխարինենք *չբջկում են, փլվում են, փլված, քախահարում են, ծախահարում են* համադրական կազմությամբ քայլերով, պարզապես իմաստի խաթարում կլինի:

Աչքերս *չուռ են գալիս*
Իմ փախած քնի վրա
Եվ հետո *փուլ են գալիս*

Ալիքները քափով գալիս,
Վարսերն իրենց *քափ են տալիս*,
Կարծես իրար *ծափ են տալիս...*

(ԶՊ, 19):

Փուլ եկած հնի վրա ... (ԶՊ, 552)

Կամ մեկ այլ բանաստեղծության մեջ որքան գեղեցիկ հարադրություններ են ընտրված՝ «Սմայի լեռներ է *փուլ տվել* քամին, ծիածաններ է *կուլ տվել*, աշխարհ է *չուռ տվել*» ... իսկ ասում են «Սխալմունքներ է *թույլ տվել*» (ԿԿ, 212):

Համո Սահյանն ընտրում է հարադրությունների տարբերակը՝ դրանց զուգահեռ ձևերի փոխարեն, և, ինչպես տեսնում ենք, նրանցով կազմված խոսքը առավել արտահայտիչ է դառնում:

7 ՆՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ իհարկե, Հ. Սահյանի թե համագործածական բառերը կիրառելու, թե այդ բառերին նոր բույր ու փայլ հաղորդելու կարողությունն ակնհայտ է, սակայն, շատ տաղանդավոր ստեղծագործողների նման, բանաստեղծը չի քավարարվում եղածով, կերտում է նոր բառեր¹² և, դեռ ավելին՝ գործածում է դրանք որպես փոխաբերություններ: Այսպես, օրինակ, քազմաթիվ բանաստեղծություններում հանդիպում է նորաստեղծ *երկինքոտ* բառը՝ բանաստեղծը գործածում է այն որպես գեղեցիկ մակդիր, որպես չափ նշող հատկանիշ՝ Բերենք մեկ օրինակ՝

Գնամ Գյազբելիս գնրուխտով հարբեմ,

Ելնեմ *երկինքոտ* ժայռերը նրա ... (ԶՊ, 349):

Որոշ բանաստեղծություններում էլ հեղինակը *երկինքոտ* բառից կազմում է *երկինքոտվել* բայը, օրինակ՝ «*Երկինքոտվել են* երգերս նորից ...» (ԶՊ, 473):

Այնուհետև Սահյանը ստեղծում է *զուգաճորդ* բառը. նորից «իր քարափն է»՝ հայրենապաշտ բանաստեղծին թվում է՝ նրա *զուգաճորդն է* (ԶՊ, 51), սրան հետևում է *ծիրկաքինոտ* բառը՝ հարազատ սարի ճակատը բնորոշող (ԶՊ, 332), *աստղաքրվել* բառը՝ «մաքրվել, վեր բարձրանալ»՝ փոխաբերական իմաստով՝

¹² Նորաստեղծությունները ճշտելիս համեմատվել են «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանի», և էդ. Սղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանի» տվյալների հետ:

«...ներսից, դրսից մաքրվել, *Աստղաքովել* են» (ՔՊ,424), կամ հայրենիքի, ժողովրդի, մասին «քարե էպոս» է գրում՝ ստեղծելով *Վիհ-քոնհրներ, հույս-ապուր, լեռնամատյան* բառերը.

...ճակատագրիդ հուցն ես քիսել	Տվել ես՝ ուտի մանուկը խեղճ
<i>Վիհ-քոնհրներիդ</i> թեժ կողերին;	... <i>Լեռնամատյանիդ</i> էջերը կուրճ
<i>Հույս-ապուրիդ</i> մեջ քար ես բրդել,	Հուշում են քարե էպոսը լուռ

(ՔՊ,415)

Ահա ստեղծում է *ժանգառք* բառը. բանաստեղծը համաձայնում է «արևի ներգաղթին», բայց՝ «թուխալ ու *ժանգառքի* արտագաղթին» (ՔՊ,472), *հոգնահանճար* բառը. մտահոգություն է հայտնում «Աեր *հոգնահանճար*, բայց խեղճ ու անճար մոլորակի» առթիվ (ՔՊ,390), *նախանձների* բառը՝ նկատի ունենալով ծառատեսակի փոխաբերական իմաստը՝ «Իսկ *նախանձներին* բազկատարած էր...». դա նշանակում է, որ վերջ չկա նախանձին, ինչից էլ դժգոհում է հեղինակը (ՔՊ,141), հետո՝ նույնօրինակ *ցրտենի* բառը՝ «Փշաքաղվել է թուփը *ցրտենու*». հեղինակը կոչ է անում՝ «Հոգուդ կրակը թեժ պիտի պահես»... (ԴԾ,62): Այսպես, նորաբանությունների մի ամբողջ շարք գործածված փոխաբերաբար, որոնք հատուկ են միայն Համո Սահյանին:

Այս ամենից հետո տեղին է այստեղ հիշատակել Համո Սահյանի և Բենիկ Սեյրանյանի հարցազրույցից մի պատահիկ. «Բանաստեղծության մեջ բառը պիտի չզգացվի: Բառը եթե բառարանից է վերցված, միանգամից երևում է: Բայց էն, որ կրունկից խուտուտ տալով բարձրանում է, մեջքով հասնում ուսերիդ, կոկորդով անցնում լեզվից ու ճորից դուրս գալիս բերանից, էդ է իսկական բառը: Դրանով է բանաստեղծություն լինում», - ասում է Համո Սահյանը¹³:

Այսպիսին է մեզ ներկայանում Հ.Սահյանը փոխաբերություններով համեմված իր խոսքով, որի ժողովրդայնությունը ամենից առաջ դրսևորվում է ասելիքի էության, խոհերի ու զգացումների արտահայտության մեջ: Եվ այդ ամենն ասվում է պարզ, մատչելի ձևերով:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՅԱ- Աստվածս՝ ցորենին ասեմ
ԿԿ - Կանչե կռունկ
ՀԵՍ- Հայաստանը երգերի մեջ
ՔՊ- Քարե պատարագ
60 և մ.հ. - 60 և մեկ հայրեն

¹³ Բ.Սեյրանյան, Մի լուսանկարի պատմություն, տես Շ.Դավթյան, - Հ. Սահյան բանաստեղծը. մտածողը, մարդը, եր., 2001, էջ 267: